



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-1-Ո-1
2014թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍՊԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

նախագահությամբ՝

Ն. Նարիմանյանի,

*մասնակցությամբ՝
ԱԽ անդամներ*

*Լ. Ասրյանի, Մ. Ավանեսյանի, Մ. Արզումանյանի,
Գ. Գրիգորյանի, Ա. Լազարյանի, Հ. Խաչատրյանի,
Կ. Մարդանյանի, Կ. Սադյանի, Մ. Սաֆարյանի,*

*ԼՂՀ արդարադատության
նախարար*

Ա. Դանիելյանի,

դատավոր

Ս. Գրիգորյանի,

քարտուղարությամբ՝

Մ. Ավետիսյանի

2014 թվականի մարտի 12-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում՝ դռնփակ նիստում, քննարկելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Սպարտակ Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.

ԼՂՀ արդարադատության նախարարի 2013թ. դեկտեմբերի 11-ի թիվ 53գ հրամանով Դատարանի դատավոր Սպարտակ Գրիգորյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել քաղաքացի Անուշ Ալեքսանյանի 2013թ. նոյեմբերի 26-ի դիմումը՝ հասցեագրված ԼՂՀ արդարադատության նախարարին:

2. Կարգապահական խախտման վերաբերյալ ԼՂՀ արդարադատության նախարարի եզրակացությունը.

ԼՂՀ արդարադատության նախարարը ԼՂՀ արդարադատության խորհրդին /այսուհետ նան՝ Արդարադատության խորհուրդ/ է ներկայացրել միջնորդություն՝ Դատարանի դատավոր Ս.Գրիգորյանին արդարադատություն իրականացնելիս դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում թույլ տալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին: Նշված միջնորդությանը կցվել է դատավոր Ս.Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԼՂՀ արդարադատության նախարարի եզրակացությունը:

Ըստ եզրակացության՝

«Դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս թույլ է տրվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում, որում առկա է դատավորի մեղքը:

Այսպես.

համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների՝ բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

Գտնում եմ, որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները պատշաճ ծանուցված են համարվում այն դեպքում, երբ դատարանում հավաստի տեղեկություն է ստացվում դատական ծանուցագիրը հասցեատիրոջը հանձնելու մասին: Դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական գործողությունների իրականացման մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայման է: Դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ԼՂՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով պաշտպանվող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն: Այդ իսկ պատճառով դատական նիստի ժամանակի և վայրի

մասին գործին մասնակցող անձանց տեղեկացնելը դատարանի պարտականությունն է, որը չպահպանելը դատավարական իրավունքի էական խախտում է:

Քաղաքացի Անուշ Ալեքսանյանի բողոքը դատական քննության է նշանակվել 2012թ. դեկտեմբերի 13-ին: Այդ մասին ծանուցագիրը դատավորի կողմից ստորագրվել է 2012թ. դեկտեմբերի 7-ին, սակայն ուղարկվել է /փոստային բաժանմունքին է հանձնվել/ 2012թ. դեկտեմբերի 13-ին՝ դատական նիստի կայացման օրը: Նշված հանգամանքը հաստատվում է առաքման ցուցակի վրա տեղադրված կնիքով:

Նշվածից բացի, Դատարանը որևէ այլ միջոց չի ձեռնարկել դիմող Ա.Ալեքսանյանին պատշաճ ծանուցումը և նրա մասնակցությունը դատական նիստին ապահովելու ուղղությամբ, ինչի արդյունքում գործի քննությունն իրականացրել է վերջինիս բացակայությամբ:

Այսպիսով, Դատարանը խախտել է ԼՂՀ Սահմանադրությամբ ու ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով պաշտպանվող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքները, ինչպես նաև ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, դիմող կողմին պատշաճ ձևով տեղյակ չի պահել դատական նիստի օրվա և ժամի մասին և բողոքը քննել է առանց վերջինիս ներկայության»:

3. Դատավորի բացատրությունում և պատասխանում բերված փաստարկները ԼՂՀ արդարադատության նախարարի եզրակացության վերաբերյալ.

Դատավոր Ս.Գրիգորյանը 2013թ. դեկտեմբերի 13-ին ԼՂՀ արդարադատության նախարարին ներկայացրել է բացատրություն հետևյալ բովանդակությամբ՝

«Իմ կողմից քննված ԸԻԴ թիվ 0004/11/12թ.՝ հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ ԼՂՀ Գլխավոր դատախազության անգործության մասին բողոքի վերաբերյալ, գործով բողոքաբեր Անուշ Ալեքսանյանի կողմից ԼՂՀ արդարադատության նախարարին ներկայացված դիմումի շուրջ ԼՂՀ արդարադատության նախարարի կողմից հարուցված կարգապահական վարույթի առթիվ տալիս եմ սույն բացատրությունն այն մասին, որ

1. Թիվ 0004/11/12թ.՝ հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ ԼՂՀ Գլխավոր դատախազության անգործության մասին բողոքի վերաբերյալ, գործը 07.12.2012թ. ստանալուց հետո իմ կողմից օրենքով սահմանված կարգով այն նշանակվել է դատաքննության 2012թ. դեկտեմբերի 13-ին, ժամը 12:30-ին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Մարտակերտի նստավայրում, որի մասին պատշաճ կարգով հայտնվել է կողմերին՝ նրանց ուղարկելով սահմանված ձևի գրություն, որում նշվել է հետևյալը՝

«ԸԻԴ 0004/11/12թ.

«07» դեկտեմբերի 2012թ.

Անուշ Արմենի Ալեքսանյանին

Մարտակերտի շրջան, գյուղ Չլդրան

Հայտնում եմ, որ Ձեր բողոքը՝ ուղղված Գլխավոր դատախազությանը, դատական քննության է նշանակված 2012 թվականի դեկտեմբերի 13-ին, ժամը 12:30-ին՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Մարտակերտի նստավայրում:

Խնդրվում է նշված օրը և ժամին ներկայանալ դատական նիստին, իսկ չներկայանալու դեպքում բողոքը քննության կառնվի Ձեր բացակայությամբ»:

Դատական նիստի օրվա և ժամի մասին գրությունն ուղարկվել է նաև ԼՂՀ Գլխավոր դատախազին նույն ամսաթվով, գրությունում նշելով, որ խնդրվում է դատական նիստին ապահովել դատախազի մասնակցությունը:

Այնուհետև, Անուշ Ալեքսանյանին հասցեագրված վերոնշյալ գրությունը դատարանից 07.12.2012թ. առաքվել է «Արցախփոստ» ՓԲԸ-ի Մարտակերտի մասնաճյուղ՝ այն հասցեատիրոջը՝ Անուշ Արմենի Ալեքսանյանին, Մարտակերտի շրջանի Չղրան գյուղ առաքելու համար, իսկ ԼՂՀ Գլխավոր դատախազին հասցեագրված գրությունը 07.12.2012թ. ուղարկվել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Ստեփանակերտի գրասենյակ՝ հասցեատիրոջն առաքելու համար:

Վերը նշված փաստերը՝ Անուշ Արմենի Ալեքսանյանին գրություն ուղարկելու մասով, հաստատվում են դատարանի կողմից կազմված և «Արցախփոստ» ՓԲԸ կնիքով դրոշմված՝ առաքման ցուցակով, իսկ ԼՂՀ Գլխավոր դատախազին ուղղված գրությունը՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Ստեփանակերտի գրասենյակից ուղարկված գրանցամատյանի համապատասխան էջից (որոնց պատճենները կցվում են):

Այսինքն՝ Անուշ Ալեքսանյանի ենթադրյալ կարծիքը, որ իբր դատական նիստի վայրի և ժամանակի մասին իրեն չի տեղեկացվել, այսքանով իսկ հերքվում է:

2. Անդրադառնալով նրան, որ դատական քննության վերաբերյալ դատարանի կողմից Անուշ Ալեքսանյանին ուղարկված գրությունը վերջինս ուշ է ստացել՝ 15.12.2012թ., ապա այդ մասով կարող եմ մատնանշել հետևյալը՝

Ի հավելումս նշեմ, որ 2012 թվականի դեկտեմբերի 7-ին՝ դատարանի կողմից սույն գործը ստանալու օրվան հաջորդող երկու օրերը՝ դեկտեմբերի 8-ը և 9-ը եղել են շաբաթ և կիրակի, իսկ դրանց հաջորդող երրորդ օրը՝ երկուշաբթի, դեկտեմբերի 10-ը՝ ԼՂՀ Պետական անկախության մասին հանրաքվեի և Սահմանադրության օրը, այսինքն՝ 8-ը, 9-ը և 10-ը ոչ աշխատանքային օրեր էին:

Չաշվի առնելով, որ 2012 թվականի դեկտեմբերի 8-ը, 9-ը և 10-ը ոչ աշխատանքային օրեր էին, ուստի հենց դա էլ կարող էր Անուշ Ալեքսանյանին ուղարկված գրությունը «Արցախփոստ» ՓԲԸ-ից հասցեատիրոջն ուշացումով հասցնելու իրական պատճառ հանդիսանալ:

Չարց է ծագում, ինչպե՞ս կարող է, որ նույն գրությունները՝ ԼՂՀ Գլխավոր դատախազին դատարանի Ստեփանակերտի գրասենյակից և Անուշ Ալեքսանյանին՝ Մարտակերտի «Արցախփոստ» ՓԲԸ-ից ուղարկված լինեին, եթե մինչև 13.12.2012թ. դրությամբ տվյալ գրությունները համապատասխան առաքիչները ստացած չլինեին, որը ևս մեկ անգամ անառարկելիորեն ապացուցում է այն հանգամանքը, որ և Անուշ Ալեքսանյանին և ԼՂՀ Գլխավոր դատախազին դատական նիստի ծանուցման վերաբերյալ գրություններն ուղարկվել էր՝ այն էլ նախօրոք:

3. Ինչ վերաբերվում է Ա.Ալեքսանյանի այն փաստարկին, որ ինքն անձամբ ներկայացել է Մարտակերտի փոստ և դատարան ու պարզել, որ չկան ապացույցներ այն մասին, որ իրեն գրություն է ուղարկվել մինչև 13.12.2012թ. և անգամ դրանից հետո, ապա այդ հանգամանքը ևս անառարկելիորեն հերքվում է «Արցախփոստ» ՓԲԸ-ի կողմից իրենց իսկ կնիքով դրոշմված առաքման ցուցակի պատճենով, որոնց բնօրինակները գտնվում են և դատարանի և Արցախփոստի արխիվներում (որոնց պատճենները կցվում են):

Ստացվում է հետևյալը, որ դատարանը, առանց բողոքաբեր Անուշ Ալեքսանյանին տեղեկացնելու, չի քննել թիվ 0004/11/12թ.՝ հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ ԼՂՀ Գլխավոր դատախազության անգործության մասին բողոքի վերաբերյալ գործը, այլ պատշաճ կերպով ծանուցել է բողոքաբերին, որից հետո քննել գործը, որն ապացուցվել է վերոնշյալ փաստերով և համապատասխան փաստաթղթերով:

ԼՂՀ քր. դատ. օր. 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված

որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը:

Ուստի, առանց բողոքաբերի մասնակցության գործը քննելը նյութադատավարական իրավունքի նորմի խախտում չեմ համարում, քանի որ Անուշ Ալեքսանյանին ուղարկված գրության վերջնամասում նախօրոք նշվել էր հետևյալը՝

Խնդրվում է նշված օրը և ժամին ներկայանալ դատական նիստին, իսկ չներկայանալու դեպքում բողոքը քննության կառնվի Ձեր բացակայությամբ:

4. Կարևոր եմ համարում նշել նաև այն, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (նախագահությամբ Ս.Գ.Գրիգորյանի) 13.12.2012թ. դատախազի մասնակցությամբ քննելով թիվ 0004/11/12 գործով դիմումը, որոշում է կայացրել Անուշ Ալեքսանյանի բողոքը՝ հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ ԼՂՀ Գլխավոր դատախազության անգործության վերաբերյալ, մերժել և նույն օրը որոշման մեկական օրինակները ևս համապատասխան գրություններով պատշաճ կարգով ուղարկվել են բողոքաբեր Անուշ Ալեքսանյանին ու ԼՂՀ Գլխավոր դատախազին (որոնց պատճենները կցվում են):

08.01.2013թ. Անուշ Ալեքսանյանի կողմից թիվ 0004/11/12 գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 13.12.2012թ. կայացված որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 17.01.2013թ. որոշմամբ Անուշ Ալեքսանյանի բերած վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության:

31.01.2013թ. Անուշ Ալեքսանյանի կողմից թիվ 0004/11/12 գործով վճռաբեկ բողոք է ներկայացվել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 17.01.2013թ. որոշման դեմ:

ԼՂՀ Գերագույն դատարանի 18.02.2013թ. որոշմամբ Անուշ Ալեքսանյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է, և որոշումը ուժի մեջ է մտել կայացման պահից, որը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

5. Ավելացնեմ նաև, որ 2013թ. հունվար ամսից սկսած մինչև 2013թ. դեկտեմբերի 13-ը ներառյալ իմ վարույթ է ընդունվել 1030 գործ, ընդ որում՝ 880 գործ ավարտվել և դատական ակտ է կայացվել, որից 368 գործ քաղաքացիական, ընդ որում՝ քննվել և վճիռ է կայացվել 252 գործով, 57 վարչական գործ, ընդ որում՝ քննվել և վճիռ է կայացվել 34 գործով, 37 քրեական գործ, ընդ որում՝ քննվել և դատավճիռ է կայացվել 26 գործով, 5 տարբեր տեսակի միջնորդություններ է քննվել ու որոշում կայացվել, 359 վարչական գործերով վճարման կարգադրություններ է արձակվել և 204 քաղաքացիական գործերով վճարման կարգադրություններ է արձակվել:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը, ապացուցվում է, որ իմ կողմից 07.12.2012թ. սույն գործը ստանալով այն դատաքննության է նշանակվել 13.12.2012թ. ժամը 12:30-ին և կողմերին տեղյակ է պահվել դատաքննության օրվա և ժամի մասին, ու գործը քննվել է դիմողի բացակայությամբ՝ վերջինիս դատական նիստին չներկայանալու պատճառով, այսինքն պահպանվել են ԼՂՀ քր. դատ. օր. 301-րդ հոդվածի դրույթները, և գտնում եմ, որ գործով դատաքննության սկզբից մինչև վերջ իմ կողմից թույլ չի տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի որևէ խախտում, առավել ևս չի խախտվել բողոքաբեր Անուշ Ալեքսանյանի որևէ

դատավարական իրավունք, այլ պահպանվել են ԼՂՀ գործող օրենսդրության բոլոր պահանջները»:

Դատավոր Ս.Գրիգորյանը 2014թ. հունվարի 23-ին վերոնշյալ բովանդակությամբ պատասխան է ներկայացրել Արդարադատության խորհրդի նախագահին:

Արդարադատության խորհրդի 2014թ. մարտի 12-ի նիստի ժամանակ Դատավոր Ս.Գրիգորյանն ընդունել է իր կողմից թույլ տված խախտման փաստը և խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին գործը կարճել՝ բավարարվելով հարցի քննարկմամբ:

3. Կարգապահական պատասխանատվության հարցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Արդարադատության խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ փաստերը՝

1.Քաղաքացի Անուշ Ալեքսանյանը 2012թ. դեկտեմբերի 07-ին ԼՂՀ Գլխավոր դատախազության անգործության դեմ բողոք է ներկայացրել Դատարան, որը Դատարանի նախագահի կողմից մակագրվել է դատավոր Ս. Գրիգորյանին:

2.Ա.Ալեքսանյանի բողոքը նշանակվել է քննության 2012թ. դեկտեմբերի 13-ին, ժամը 12:30-ին՝ Դատարանի Մարտակերտի նստավայրում:

3.Դատարանը Ա.Ալեքսանյանին ուղարկել է ծանուցագիր, որը սահմանված կարգով կազմվել և ստորագրվել է դատավոր Ս.Գրիգորյանի կողմից 2012թ. դեկտեմբերի 07-ին, սակայն փոստային բաժանմունք է հանձնվել 2012թ. դեկտեմբերի 13-ին:

4.Դատարանն Ա.Ալեքսանյանի բողոքը քննել է 2012թ. դեկտեմբերի 13-ին, առանց վերջինիս ներկայության:

5.Դատարանի 2013թ. դեկտեմբերի 13-ի որոշմամբ Ա.Ալեքսանյանի բողոքը մերժվել է:

6.Ա.Ալեքսանյանը 2012թ. դեկտեմբերի 13-ին նշանակված դատական նիստի ծանուցագիրը ստացել է 2012թ. դեկտեմբերի 15-ին:

4.Արդարադատության խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննարկելով Դատարանի դատավոր Ս.Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով ԼՂՀ արդարադատության նախարարի զեկույցը, դատավորի բացատրությունն, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Արդարադատության խորհուրդը գտնում է, որ սույն գործով կիրառելի է ԼՂՀ դատական օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասը, ստորև բերվող պատճառաբանությամբ՝

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Վերոնշյալ սահմանադրական նորմերի բովանդակությունից հետևում է, որ դատական պաշտպանության իրավունքը համընդհանուր է ու լիարժեքորեն պետք է գործի նաև քրեական դատավարության ոլորտում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու

պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ԼՂՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի հրապարակային քննության իրավունք:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝ քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին:

Սա ենթադրում է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի օրվա, ժամի և վայրի իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն հնարավոր բոլոր միջոցների և եղանակների օգտագործմամբ:

Դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները պատշաճ ծանուցված են համարվում այն դեպքում, երբ դատարանում հավաստի տեղեկություն է ստացվում դատական ծանուցագիրը հասցեատիրոջը հանձնելու մասին:

Սույն վարույթում առկա նյութերից պարզվում է, որ դատավոր Ս.Գրիգորյանի կողմից Ա.Ալեքսանյանի դիմումը ստացվել է 07.12.2012թ.: 07.12.2012թ. Դատարանից ելքագրված ծանուցագրով հաստատվում է, որ նույն օրը Դատարանը այն նշանակել է քննության 13.12.2012թ., ժամը 12:30-ին: Ռեեստրով հաստատվում է, որ Ա.Ալեքսանյանին հասցեագրված դատական նիստի ծանուցագիրը Դատարանի կողմից փոստային բաժանմունք է հանձնվել դատական նիստի օրը՝ 13.12.2012թ.:

Դատական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ Դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, միջազգային իրավունքի նորմերին և օրենքներին համապատասխան:

Նշվածից հետևում է, որ Դատարանը պարտավոր էր ղեկավարվել վերը վկայակոչած նորմերով և բողոքը քննել Սահմանադրությանը, միջազգային իրավունքի նորմերին և օրենքներին համապատասխան:

Արդարադատության խորհուրդը գտնում է, որ բավարար ուշադրություն և շրջահայացություն ցուցաբերվելու դեպքում, դատավոր Ս.Գրիգորյանին չէր կարող ակնհայտ չլինել, որ դիմող Ա.Ալեքսանյանը ծանուցված չէ դատական նիստի վայրի և ժամանակի մասին:

Դատարանի դատավոր Ս.Գրիգորյանի կողմից ԼՂՀ քրեական դատավարությամբ ամրագրված նորմերի ոչ պատշաճ կատարումը հանգեցրել է

դատավարական նորմի էական և կոպիտ խախտման, որի արդյունքում դիմող Ա.Ալեքսանյանը գրկվել է ԼՂՀ Սահմանադրությամբ, Կոնվենցիայով և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված դատական պաշտպանության իր իրավունքի իրացումից:

Դատական նիստի ժամանակի և վայրի մասին դատավարության մասնակիցներին տեղեկացնելու Դատարանի պարտականությունն ուղղակիորեն կապված է ԼՂՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով պաշտպանվող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ, քանի որ նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն: Այդ իսկ պատճառով դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին գործին մասնակցող անձանց ժամանակին իրազեկումը դատարանի պարտականությունն է:

Արդարադատության խորհուրդը գտնում է, որ օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներն են արդարադատության իրականացման ընթացքում ԼՂՀ Սահմանադրության, օրենքների նորմերի այնպիսի էական խախտումները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, դրանցից գրկելուն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման խոչընդոտելուն և ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ և օրինական որոշման կայացմանը:

Երբ կարգապահական պատասխանատվության հիմք են դատավորի կողմից դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումները, որոնց առկայությունը ապացուցվում է կարգապահական պատասխանատվության գործի քննությամբ, Արդարադատության խորհուրդն էլնում է դատավորի մեղավորության կանխավարկածից, քանի որ վերոնշյալ նորմերի խախտումներն ենթադրում են մեղքի որևէ տեսակի առկայություն:

Արդարադատության խորհուրդն արձանագրել է, որ Դատարանի դատավոր Ս.Գրիգորյանն շուրջ երեք տարի է, ինչ աշխատում է որպես դատավոր, իր գործունեության ընթացքում առաջին անգամ է նրա նկատմամբ հարուցվել կարգապահական վարույթ և ինքն ընդունել է իր կողմից թույլ տված խախտման փաստը:

Արդարադատության խորհուրդը հաշվի է առնում նաև դատավոր Ս.Գրիգորյանի գործերով ծանրաբեռնվածությունը՝ 2012թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին դատավոր Ս.Գրիգորյանին մակագրվել է շուրջ 1000 գործ, որից մոտ 900-ը ավարտվել և դատական ակտ է կայացվել:

ԼՂՀ դատական օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե Արդարադատության խորհուրդը նպատակահարմար չի գտնում դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժի միջոց, ապա կարող է բավարարվել հարցի քննարկմամբ՝ որոշմամբ ամրագրելով կարգապահական պատասխանատվության հիմքերի առկայությունը և կարճելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը:

Ղեկավարվելով ԼՂՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածով, 110-րդ հոդվածի 2-րդ մասով և 111-րդ հոդվածով, Արդարադատության խորհուրդը՝

1. ԼՂՀ արդարադատության նախարարի միջնորդությունը մերժել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Սպարտակ Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճել՝ բավարարվելով հարցի քննարկմամբ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

_____ **Լ. ԱՍԻՅԱՆ**

_____ **Մ. ԱՎԱՆԵՍՅԱՆ**

_____ **Ս. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**

_____ **Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

_____ **Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

_____ **Կ. ՄԱՂՅԱՆ**

_____ **Ս. ՍԱՖԱՐՅԱՆ**

_____ **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

_____ **Կ. ՄԱՐԴԱՆՅԱՆ**